**Վահրամ Ռ. Հովյան**[1]

# ԵԿԵՂԵՑԻ–ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՇ ԴՐՎԱԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**Փորձագետի տեսակետ, 06.08.2025 թ.**

***Սեղմագիր***

*Սույն վերլուծությունը քննում է Հայաստանում Եկեղեցի–իշխանությունների միջև սրված հարաբերությունները՝ դիտարկելով երկու հիմնական առիթ. Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցը Բելառուս և նրա՝ 44-օրյա պատերազմից հետո վարչապետի հրաժարականի կոչը: Համեմատական վերլուծության միջոցով ցույց է տրվում ՀՀ իշխանությունների դիրքորոշման անհամատեղելիությունը Բելառուսի և Վրաստանի նկատմամբ՝ ընդգծելով, որ Վրաստանի գործողությունները պատերազմի ժամանակ ավելի մեծ ազդեցություն են ունեցել:*

*Տեքստը պարզաբանում է, որ Կաթողիկոսի այցը Բելառուս ունեցել է բացառապես հովվապետական բնույթ՝ կապված տեղի հայ համայնքի և նորակառույց եկեղեցու հետ, ինչը հոգևոր առաջնորդի պարտականությունն է՝ անկախ միջպետական քաղաքական հարաբերություններից: Նաև վերլուծվում է Կաթողիկոսի՝ վարչապետին ուղղված հորդորը, որը ներկայացվում է ոչ թե որպես քաղաքական պահանջ, այլ որպես հայրապետական խորհուրդ: Այս դիրքորոշումը հաստատվել է նաև Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Արամ Ա-ի և Հայ Առաքելական Եկեղեցու մյուս նվիրապետական աթոռների ղեկավարների կողմից, ինչը վկայում է Եկեղեցու կառուցվածքի միասնականության և անկախության մասին՝ ընդդեմ իշխանությունների քննադատության:*

***Բանալի բառեր:*** *Հայաստան, Եկեղեցի–իշխանություններ հարաբերություններ, Գարեգին Բ, Արամ Ա, Բելառուս, Վրաստան, 44-օրյա պատերազմ, քաղաքականություն, հովվապետական այց, հայրապետական հորդոր:*

## 1. Բելառուսի հարցը և հայկական դիվանագիտության թերությունները

Այս օրերին մեր երկրում քննարկվող գլխավոր հարցերից մեկը Եկեղեցի-իշխանություններ հարաբերություններն են: Եկեղեցուն, մասնավորապես՝ Վեհափառ Հայրապետին քննադատողներն առաջ են քաշել նոր *«փաստարկ»*: Բանն այն է, որ 2025 թ. մայիսին Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն այցելել է Բելառուս, ինչն արժանացել է մեր իշխանությունների և իշխանամետ շրջանակների բացասական վերաբերմունքին:

[1] Քաղաքագետ, սփյուռքագետ, 1999–2005 թթ. սովորել է ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի քաղաքագիտության ամբիոնում: 2006–2019 թթ. աշխատել է «Նորավանք» ԳԿՀ Հայագիտական կենտրոնում՝ որպես փորձագետ, ապա՝ ավագ փորձագետ: 2012–2019 թթ. եղել է նաև «Նորավանք» ԳԿՀ Գիտական-փորձագիտական խորհրդի քարտուղարը: 2019–2021 թթ. աշխատել է «Օրբելի» վերլուծական կենտրոնում՝ որպես փորձագետ: 2022 թ.-ից՝ որպես դասախոս, աշխատում է ՀՊՏՀ Հասարակագիտության ամբիոնում:

Նախ՝ հայ-բելառուսական հարաբերությունների մասին: Գաղտնիք չէ, որ Հայաստանում 2018 թ. քաղաքական անցումից հետո հայ-ռուսական հարաբերություններին զուգահեռ տուժեցին նաև հայ-բելառուսական հարաբերությունները: Ներկայումս Երևան–Մինսկ հարաբերությունները, մեղմ ասած, լավագույն ժամանակները չեն ապրում: Հայաստանի իշխանությունները, վկայակոչելով Բելառուսի աջակցությունը Ադրբեջանին 44-օրյա պատերազմի ժամանակ, այդ երկիրն ու նրա առաջնորդ Ալեքսանդր Լուկաշենկոյին հռչակել են *persona non grata*: Վարչապետ Նիկոլ Փաշինյանը հայտարարել է, որ քանի դեռ Բելառուսի նախագահը Ալեքսանդր Լուկաշենկոն է, ինքը չի այցելի այդ երկիր: Այդ պատճառով էլ Հայաստանի կառավարող վերնախավը *«բոյկոտում»* է և պատրաստվում է հետայսու էլ *«բոյկոտել»* Բելառուսում անցկացվող միջազգային միջոցառումները: Թե ի՞նչ է Հայաստանը գործնականում շահելու իր իշխանությունների նման գործելաոճից, պարզ չէ: Բայց դա այլ հարց է:

44-օրյա պատերազմի ժամանակ Բելառուսի կողմից Ադրբեջանին ցուցաբերված աջակցության և դրան ՀՀ իշխանությունների հակազդեցության հարցը ցանկալի է դիտարկել համեմատական վերլուծության միջոցով: Տվյալ պարագայում Բելառուսի հետ համեմատելի լավագույն երկիրը, թերևս, Վրաստանն է:

**2. Վրաստան–Բելառուս զուգահեռներ**

Այսպես, 44-օրյա պատերազմի ժամանակ Վրաստանը փակել էր իր օդային և ցամաքային տարածքը՝ Հայաստանին զենք-զինամթերքի մատակարարումների համար: Այդ կերպ մեր երկիրը, նախկին պաշտպանության նախարար Դավիթ Տոնոյանի բառերով՝ հայտնվել էր *«փոփալ շրջափակման»* մեջ՝ սպառազինությունների ձեռքբերման տեսանկյունից: Մինչդեռ նույն Վրաստանի տարածքով նույն 44-օրյա պատերազմի ժամանակ Թուրքիան և Իսրայելը ազատորեն զենք և զինամթերք էին մատակարարում Ադրբեջանին: Սա այնքան հայտնի իրողություն է, որ որևէ մեկը չի էլ փորձել երբևէ հերքել այն:

Արդ, ինչպե՞ս է ստացվում, որ ՀՀ իշխանություններն առիթը բաց չեն թողնում Վրաստանի իշխանությունների հետ ջերմ հարաբերություններ պահպանելու համար, իսկ Բելառուսին և նրա նախագահին հռչակել են հայ ժողովրդի թշնամի: Եթե համեմատենք Վրաստանն ու Բելառուսը 44-օրյա պատերազմում նրանց վարած քաղաքականության համատեքստում, ապա հարկ է ուշադրություն դարձնել հետևյալ երկու հանգամանքների վրա.

1. **Աշխարհագրական դիրքը:** Վրաստանը մեր տարածաշրջանում գտնվող երկիր է՝ սահմանակից Հայաստանին և Ադրբեջանին: Մինչդեռ Բելառուսը համեմատաբար հեռավոր երկիր է Հարավային Կովկասի համար: Հետևաբար, Բելառուսի վարած քաղաքականությունը չէր կարող ավելի մեծ ազդեցություն ունենալ 44-օրյա պատերազմի

ելքի վրա, քան Վրաստանինը: Մասնավորապես, եթե Վրաստանը պահեր հավասարությունը (պարիտետը)՝ կամ չարգելափակեր իր տարածքով Հայաստանին զենք-զինամթերքի մատակարարումը, կամ էլ նման արգելափակում մտցներ նաև Ադրբեջանի համար, ապա մեծ հավանականությամբ 44-օրյա պատերազմի ելքն էլ կարող էր այլ լինել:

2. **Քաղաքական համակարգը:** Վրաստանը արևմտյան կողմնորոշմամբ ժողովրդավարական երկրի համբավ ունի: 2003 թ. *«Վարդերի հեղափոխությունից»* հետո երկար ժամանակ այդ երկիրը համարվում էր *«ժողովրդավարության օազիս»* մեր տարածաշրջանում: Թեև վերջին շրջանում որոշակի ստվեր է նետվել Վրաստանի արևմտյան կողմնորոշման վրա, այնուամենայնիվ, մինչ օրս էլ այդ երկիրը պահպանում է եվրո-ատլանտյան կողմնորոշմամբ ժողովրդավարական երկրի իր համբավը: Մինչդեռ Բելառուսը աշխարհում ընկալվում է որպես ոչ ժողովրդավարական՝ ավտորիտար երկիր: Այս տեսանկյունից Մինսկի ցուցաբերած աջակցությունը Բաքվին ինչ-որ տեղ օրինաչափ է: Չէ՞ որ, եթե առաջնորդվենք այդ տրամաբանությամբ, երկուսն էլ ավտորիտար երկրներ են, և մի ավտորիտար առաջնորդն աջակցել է մեկ այլ ավտորիտար առաջնորդին: Այլ կերպ ասած՝ ոչ ժողովրդավար Ա. Լուկաշենկոն կանգնել է իր *«եղբայր»* ոչ ժողովրդավար Ի. Ալիևի կողքին: Սա լավ չէ, սակայն տրամաբանական է: Իսկ ի՞նչ ասել, երբ *«ժողովրդավարական»* Վրաստանի իշխանությունները կանգնում են բռնապետ Ալիևի, այլ ոչ թե *«դեմոկրատ»* Ն. Փաշինյանի կողքին:

Վերոգրյալի նպատակը բնավ էլ Բելառուսին պաշտպանելը չէ, ոչ էլ՝ Վրաստանի հետ ՀՀ հարաբերությունների սրումը, այլ ՀՀ իշխանությունների վարած ներքին և արտաքին քաղաքականության թույլ և խոցելի կողմերը ցույց տալը:

### 3. Վեհափառ Հայրապետի այցը Բելառուս. Հովվապետական պարտականություն

Այժմ անդրադառնանք Վեհափառ Հայրապետի՝ Բելառուս կատարած այցին: «Քննադատներն» այնպես են խոսում, կարծես Ամենայն Հայոց Կաթողիկոսը գնացել էր Լուկաշենկոյի հետ սուրճ խմելու: Իրականում Վեհափառը հովվապետական այցով մեկնել էր իր բելառուսական հոտին այցելության: Բելառուսում շուրջ 9-հազարանոց հայ համայնք գոյություն ունի: Եվ վերջերս՝ պատմության մեջ առաջին անգամ, այդ երկրում կառուցվել ու բացվել է Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու տաճար՝ Մինսկի Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին: Ուստի և Գարեգին Բ Հայրապետն էլ գնացել էր մասնակցելու նորակառույց եկեղեցու օծման արարողությանն ու այդ շրջանակներում՝ իր հոտին տեսակցելու:

Եթե ներկայումս հայ-բելառուսական հարաբերությունները, մեղմ ասած, բարձր մակարդակի վրա չեն, ուրեմն Ամենայն Հայոց Կաթողիկոսը պետք է անհովի՞վ թողնի

Բելառուսի իր հոտը: Շուրջ 9-հազարանոց բելառուսահայ համայնքը չպե՞տք է արժանանա իր հոգևոր առաջնորդի այցելությանը, չպե՞տք է հնարավորություն ունենա բավարարելու իր կրոնական և հոգևոր-մշակութային պահանջմունքները, պետք է զրկվի՞ ազգային ինքնությունը պահպանելու հնարավորությունից:

Ի դեպ, Ամենայն Հայոց Կաթողիկոսը հովվապետական այցով կարող է մեկնել աշխարհի ցանկացած երկիր, որտեղ կա հայ համայնք, այդ թվում՝ Թուրքիա: Եթե մի օր Բաքվում էլ հայ համայնք լինի և հայկական եկեղեցի օծվի, ապա Վեհափառ Հայրապետը կարող է այցելել նաև այդ երկիր:

**4. Քաղաքական հորդոր, թե՞ հայրապետական խորհուրդ**

Վեհափառ Հայրապետին քննադատողները ասում են նաև, որ նա 2020 թ. 44-օրյա պատերազմից հետո հանդես է եկել վարչապետի հրաժարականի պահանջով:

Նախ՝ դա ոչ թե քաղաքական պահանջ էր, այլ հայրապետական հորդոր: Իսկ ի՞նչ տարօրինակ բան կա դրանում: Վեհափառ Հայրապետը՝ Հայ եկեղեցու գլուխը, մեր բոլորի հոգևոր առաջնորդն է, հոգևոր հայրը: Եվ ցանկացած հարցում էլ կարող է հայրական հորդորով հանդես գալ իր հոտի զավակներից յուրաքանչյուրի նկատմամբ: Ուստի, Նիկոլ Փաշինյանին համարելով իր հոտի զավակ, ինչպես նաև գնահատելով ստեղծված կացությունը՝ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը 44-օրյա պատերազմից հետո հայրաբար հորդորել է նրան վայր դնել վարչապետի լիազորությունները: Այլ հարց է, որ ՀՀ իշխանությունները և նրանց համակիրները դա ընկալել են՝ որպես քաղաքական պահանջ և միջամտություն քաղաքական կյանքին:

Սակայն դա դեռ մի կողմ: Նույն ժամանակ նման հորդորով է հանդես եկել նաև Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա կաթողիկոսը: Նա էլ հո *«նախկին իշխանությունների դրածոն»* չէ՞: Նրա նկատմամբ էլ ՀՀ այսօրվա իշխանությունները հո չունե՞ն կուսակրոնության ուխտը խախտած լինելու և այլ մեղադրանքներ:

Ճիշտ հակառակը՝ Արամ Ա Կաթողիկոսն այն անձն է, ով նախկին իշխանությունների օրոք բարձրաձայնում էր Հայաստանում առկա խնդիրների ու արատավոր բարքերի մասին, հաճախ հանդես գալիս քննադատական խոսքով: Իսկ 2018 թ. Հայաստանում տեղի ունեցած իշխանափոխությունից հետո նա մի պահ հիացած էր Նիկոլ Փաշինյանով:

Այստեղ հիշատակման է արժանի վերջինիս այցը Լիբանան 2018 թ. և հանդիպումը տեղի հայ համայնքի հետ՝ Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա Կաթողիկոսի գլխավորությամբ: Գովասանքի ու մեծարանքի ինչպիսի՜ խոսքեր էին հնչում Կիլիկիո աթոռի գահակալի կողմից Նիկոլ Փաշինյանի հասցեին: Ենթադրում եմ, որ Արամ Ա-ն կամ ծանոթ չէր Ն. Փաշինյանի նախընթաց՝ ընդդիմադիր շրջանի գործունեությանը, կամ էլ, գուցե, դիվանագիտություն էր բանեցնում՝ փորձելով առողջ հարաբերություններ կառուցել Հայաստանի նոր իշխանությունների հետ: Սակայն ինչ էլ լիներ պատճառը, ակնհայտ է,

որ սկզբնական շրջանում Նիկոլ Փաշինյանի ու Արամ Ա-ի հարաբերությունները շատ սերտ էին, կարելի է ասել՝ անգամ նախանձելի: Բայց երբ եկավ ժամանակը, Արամ Ա Վեհափառ Հայրապետը նույնպես հանդես եկավ ՀՀ վարչապետի լիազորությունները վայր դնելու՝ Նիկոլ Փաշինյանին ուղղված հայրական հորդորով:

**5. Նվիրապետական աթոռների միասնականությունը**

Այսօր էլ Եկեղեցի–իշխանություններ սրված հարաբերությունների պայմաններում Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու (ՀԱՍԵ) մյուս նվիրապետական աթոռների գահակալները՝ Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա Կաթողիկոսը, Երուսաղեմի Հայոց Պատրիարք Նուրհան արքեպիսկոպոս Մանուկյանը և Կ. Պոլսի Հայոց Պատրիարք Սահակ արքեպիսկոպոս Մաշալյանը, ի պատիվ իրենց, կանգնած են Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի կողքին: Նրանք իրենց մտահոգությունն են արտահայտել ՀԱՍԵ դեմ իշխանությունների իրականացրած գործողությունների առնչությամբ: Արդ, Արամ Ա-ի, Նուրհան արքեպիսկոպոս Մանուկյանի և Սահակ արքեպիսկոպոս Մաշալյանի հանդեպ էլ ՀՀ իշխանությունները հո չե՞ն կարող առաջադրել այնպիսի մեղադրանքներ ու վերագրումներ, ինչպիսիք առաջադրում են Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդեպ:

Այստեղ հարկ է շեշտել, որ ՀԱՍԵ-ի մյուս երեք նվիրապետական աթոռները՝ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունը, Երուսաղեմի և Կ. Պոլսի Հայոց Պատրիարքությունները, մեծ հաշվով, անկախ են Մայր Աթոռ Սբ. Էջմիածնից, թեև ընդունում են վերջինիս գերագահությունը: Այդ Աթոռների գահակալները չեն նշանակվում Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից և հաշվետու չեն վերջինիս առաջ: Նրանք ընտրվում են իրենց տեղերում՝ Անթիլիասում, Երուսաղեմում և Կ. Պոլսում, և առաջնորդում են իրենց հոտն ինքնուրույնաբար: Այսինքն՝ նրանք անձնական շահագրգռվածություն չունեն Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի կողքին կանգնելու համար:

Ցավոք, առայժմ լսելի չէ քույր եկեղեցիների՝ Հայ Կաթողիկե և Հայ Ավետարանական եկեղեցիների արձագանքը: